

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Քաղաք Երևան
թվական

քսաներկուսը մայիսի, երկու հազար տասնութ

ՀՀ արդարադատության նախարարությունում մայիսի 22-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստ:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ՝

Արտակ Ջեյնայան- ՀՀ արդարադատության նախարար

Արթուր Հովհաննիսյան- ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Սուրեն Քրմոյան- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վիգեն Քոչարյան- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Արտակ Ասատրյան- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Արսեն Ղազարյան-«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն»
հասարակական կազմակերպություն

Ամո Շարոյան-«Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում»
հասարակական կազմակերպություն

Արմեն Գալստյան-«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն»
հասարակական կազմակերպություն

Գրիգորի Գրիգորյանց-«Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան
ներկայացուցչություն

Արթուր Սաքունց-«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպություն

Նաիրա Առաքելյան-«Արմավիրի զարգացման կենտրոն» սոցիալ-
տնտեսական հասարակական կազմակերպություն

Նարե Արամյան-«Ընդդեմ իրավական կամայականության»
հասարակական կազմակերպություն

Եվգենիա Իվանովնա-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»
հասարակական կազմակերպություն

Արտակ Կիրակոսյան-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»
հասարակական կազմակերպություն

Ռոբերտ Պետրոսյան-«Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միություն

Լիլիթ Քամայան-«Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միություն

Ավետիք Իշխանյան-«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Թամարա Աբրահամյան-«Արազա» բարեգործական հասարակական կազմակերպություն

Աշոտ Խլոյան-«Հասարակական խորհուրդ» Երիտասարդ մտավորականների հասարակական կազմակերպություն

Մարի Մաթոսյան-«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն

Անժելա Թասայան-«Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Կարեն Զադոյան-«Իրավաբանների հայկական ասոցացիա» հասարակական կազմակերպություն

Սաիդ Ավդալյան-«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

Դավիթ Ամիրյան-«ԲՀԻ» օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ

Աշոտ Մելիքյան-«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» նախագահ

Արշակ Գասպարյան-«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության նախագահ,

Սոնա Այվազյան-«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն

Լիանա Ղալթաղչյան-«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն

Հերիքնազ Տիգրանյան-«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն

Սուրեն Մաղաքյան-Լիարժեք կյանք բարեգործական հասարակական կազմակերպություն

Իրինա Գասպարյան-Ասորիների միության նախագահ

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք, օրակարգային հարցերի հիմնական նպատակների ներկայացում:
2. Թեմա՝ Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից արդարադատության ոլորտին վերաբերող առաջարկությունների ներկայացում՝ Կառավարության նոր ծրագրում ներառելու նպատակով:

Արտակ Ջեյնալյան- Նախարար Ջեյնալյանը ողջունել է նիստի մասնակիցներին և նշել, որ Արդարադատության նախարարությունը Խորհրդի անդամներից ակնկալում է առաջարկություններ, որոնք պետք է քննարկվեն և ընդգրկվեն Կառավարության նոր ծրագրում: Նախարարը տեղեկացրել է, որ Կառավարության նոր ծրագիրը 2018-2022 թվականներին է ուղղված լինելու և պարզաբանել, որ իրավական առումով այլ հնարավորություն տրված չէ՝ չնայած որ նախատեսվում է հնարավորինս շուտ իրականացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որպեսզի պարզ լինի օրենսդիր մարմնի իրական պատկերը և որ գործադիր իշխանությունն էլ արտահայտի ժողովրդի կամքը:

Արթուր Սաքունցը մի շարք առաջարկներ է ներկայացրել Ընտրական օրենսգրքի վերաբերյալ: Կազմակերպության կողմից օրինակ առաջարկվել է՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ հանձնարարականների լիարժեք և ամբողջական արտացոլում ՀՀ ընտրական օրենսգրքում, ինչպես նաև ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովը պետք է ունենա պարտավորություն ուսումնասիրելու թեկնածուի ֆինանսական միջոցների վերաբերյալ տվյալների ճշտությունը, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից թեկնածուներին, վստահված անձանց, ընտրական գործընթացին մասնակցող այլ անձանց տրամադրված և ԿԸՀ-ին ներկայացվելիք փաստաթղթերի/տեղեկանքների իսկությունը: Գրավոր առաջարկում նաև ընդգծվել է առանձնացնել երկրում գտնվող և չգտնվող ընտրողների ցուցակները և փակցնել տեսանելի վայրում և մի շարք այլ հարցեր:

Դավիթ Ամիրյանը Արդարադատության նախարարություն է ներկայացրել Մարդու իրավունքների ռազմավարության գործողությունների ծրագրի վերաբերյալ առաջարկներ, ինչպես նաև ներկայացվել է Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական դիտարկման միջանկյալ ժամանակահատվածի համար քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպությունների կողմից պատրաստված զեկույցը, Դատական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ կարծիք, ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առավել արդյունավետ իրականացման գործողությունների՝ քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպությունների մոտեցումները:

Գրիգորի Գրիգորյանցն առաջարկել է քննարկել անչափահասների արդարադատության վերաբերյալ առանձին օրենսդրական ակտի մշակման և ընդունման նպատակահարմարության հարցը, ինչը հաշվի կառնի նրանց հատուկ կարգավիճակը և կստեղծի իրավունքների պաշտպանության լրացուցիչ գործնական

երաշխիքներ, քննչական գործողություններ իրականացնող մարմիններում սահմանել մասնագիտացված ստորաբաժանումներ անչափահասների գործերով, ինչպես նաև քննարկել անչափահասների մասնագիտացված դատարանների կամ առնվազն պաշտոնապես հատուկ մասնագիտացված դատավորների առկայության հարցը, պրակտիկայում կիրառելի դարձնել իրավախախտ, տուժող, վկա երեխաների, իրավունքների պատշաճ պաշտպանությունը և անհրաժեշտ առանձնահատկությունների ապահովումը, մասնավորապես, ինստիտուցիոնալ մակարդակում լուծել հոգեբանների և հատուկ մանկավարժների ներգրավվման համար մարդկային, ֆինանսական և մասնագիտական ռեսուրսներով ապահովման մեխանիզմը:

Ավետիք Իշխանյանն առաջարկ է ներկայացրել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, մասնավորապես առաջարկվել է՝ նախագծի 14-րդ հոդվածով ավելացնել «*եթե առկա են հիմնավոր կասկածներ*», ձևակերպումը, որ հավաքն ունի նման նպատակ, ինչն անորոշություն է առաջացնում՝ ինչ չափանիշների հիման վրա և ո՞ր մարմինն է ներկայացնում կասկածները և ինչպե՞ս են այդ կասկածները հիմնավորվում: Նախագծի 18-րդ հոդվածով առաջարկվել է օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «*Նույն երևույթի կամ իրադարձության առնչությամբ անցկացվող ցանկացած հաջորդող հավաքը չի կարող ինքնաբուխ համարվել և պետք է անցկացվի իրազեկման սահմանված ընթացակարգով*»: Նախագծի 19-րդ հոդվածով առաջարկվել է օրենքի 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝ «*Հավաքը չի կարող սկսվել, եթե չի ներկայացել ոչ մի կազմակերպիչ*»:

Արշակ Գասպարյանն առաջարկել է ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների բարեփոխումների արդյունավետությանը նպաստող առաջնահերթությունների վերաբերյալ մի շարք դիտարկումներ:

Կարեն Զաղոյանն առաջարկել է աշխատանքներ իրականացնել հակակոռուպցիոն կրթության ուղղությամբ, օրինակ՝ իրականացնել հակակոռուպցիոն իրազեկման արշավներ: Համընդհանուր առաջարկներ են հնչել Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ, բիզնես ոլորտի, ներառյալ՝ հարկային և ազատ տնտեսական մրցակցություն թեմաներով: Նիստի ընթացքում նաև ներկայացվել են որոշ կարծիքներ Ընտրական ոլորտի վերաբերյալ, մասնավորապես՝ ընտրություններում քաղաքական կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով իրականացնել ՀՀ սահմանադրության ընտրական օրենսգրքի, կուսակցությունների մասին ՀՀ օրենքի, քրեական օրենսգրքի արմատական հակակոռուպցիոն բարեփոխումներ, այդ թվում՝ ընտրություններին մասնակցությունը որպես պարտականության սահմանում, վարչական ռեսուրսի չարաշահման և ընտրատեղամասերի շուրջ քարոզչության իրականացման իրավակարգավորումների և պատասխանատվության միջոցների վերանայում ու խստացում: Գրավոր ներկայացվել են նաև մի շարք այլ առաջարկներ:

Աշոտ Մելիքյանն առաջարկել է կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ, քանի որ, ըստ առաջարկող կողմի, օրենքում առկա են դրույթներ, որոնք կարող են սահմանափակել տեղեկատվություն ստանալու քաղաքացու և լրագրողի սահմանդրական իրավունքը: Առաջարկներ են ներկայացվել նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, մասնավորապես կարծիք է հնչել՝ վերականգնել այն դրույթը, որը կարող է հակասել տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ հաշվի առնելով խոսքի ազատության և ՁԼՄ-ների անկաշկանդ գործունեության անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում: Ներկայացվել են նաև մի շարք այլ առաջարկներ:

Ռոբերտ Պետրոսյանն ու Լիլիթ Քամայանն անդրադարձել են համայնքների վարչական սահմանների փոփոխության դեպքում համայնքների լսված լինելու իրավունքի՝ միջազգային չափանիշների համաձայն իրականացման ապահովմանը: Սույն խնդրին լուծում տալու համար առաջարկվել է մշակել եւ ընդունել համապատասխան օրենսդրական իրավակարգավորումներ, որոնք կսահմանեն համայնքների լսված լինելու իրականացման եղանակները, մեխանիզմները, ընթացակարգը, ինչպես նաեւ այդ կապակցությամբ համապատասխան մարմինների պարտականությունները: Առաջարկվել է նաև հստակ սահմանել համայնքների խոշորացման կամ առանձնացման կարգավիճակը: Տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և նրանց կարգավիճակի վերաբերյալ ներկայացվել են նաև մի շարք այլ առաջարկներ:

Ընդդեմ իրավական կամայականության հասարակական կազմակերպությունը հանդիպման ընթացքում թղթային տարբերակով ներկայացրել է առաջարկությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Քննարկված թեմաների վերաբերյալ առաջարկները գրավոր ներկայացնել Հասարակական խորհրդի քարտուղարություն՝ council@justice.am էլեկտրոնային հասցեով:

Արձանագրությունը բաղկացած է 5 էջից: